

պ(ա)նա յառաջնորդ...» (Էջմիածին, 1951, Նոյ.—Դեկտ., էջ 44): Նոյն վանքը մասամբ փճացած ուրիշ արձանագրութեան մը վրայ կը կարդացուի. «... (որ)դի Մարծպանա... ի սուրբ աստուածածնիս...» (Յիշատ. 28): Գարեգին Եպս. Յովսէփեան Մարծպան (Բ-ի) Գրիգոր իշխան որդւոյն արձանագրութիւնը կը նկատէ:

Տեսանք թէ Գրիգոր Բ կալուածներու հետ նաեւ Բարձրաքաշի նուիրած է «զաւագ սուրբ նշանն», որուն ինչ մասունքը ըլլալը զժրախտաբար յայտնի չէ: Կը նուիրէ նաեւ «աւետարան» եւ «պատուական գրեանք», ինչպէս նաեւ «գարդ եկեղեցոյ», անշուշտ խորանի զարդեր, հաւանաբար արծաթեայ կամ ոսկեայ:

Ստեփաննոս Օրբէլեան խօսելով Լիպարիտ Օրբէլեանի մասին, կը գրէ որ ունեցաւ հինգ որդի՝ որոնք «մնան որը եւ անտերունէք»: Բայց ասոնցմէ «գեղեցիկն ելիկում փեսայացեալ էր Գրիգորոյ Մարծանեանց, որ յազգէ Մամիկոնէից համբաւի. եւ վարէր զաշրութիւն հօրն» («Պատմ. Նախնային Սիսական», 1910, էջ 398): Գրիգոր Մարծանեանց անտարակոյս պէտք է որդադրել Մարծ(պ)անեանց, որուն հայրն էր Մարծպան կամ Մարգպան Բ, եւ որուն տէրութիւնն էր որ Գրիգոր Բ կը «վարէր»:

Հետաքրքրական է որ ինչպէս Մամիկոնեանց Գեղի ճիւղը Համապատեան սիրած է կոչել ինքզինքը, յետոյ ալ Մարգպան Բ-ի յաջորդները երբեմն նախընտրած են Մարծպանեանց կոչուիլ:

Գրիգոր Բ թէ ունեցած է որդիներ, անոնց ծանօթ չեմ: Սակայն ըմտեփաննոս Օրբէլեանի մեր վերը տուած վկայութեան համաձայն Լիպարիտ Օրբէլեանի «գեղեցիկն ելիկում» որդին «փեսայացեալ էր Գրիգորոյ Մարծանեանց, որ յազգէ Մամիկոնէից համբաւի»: Ուրեմն ելիկում Օրբէլեան ամուսնացած էր Գրիգոր Բ-ի դստեր: Մեզի ուրիշ աղբիւրներէ ծանօթ է որ ելիկում Օրբէլեանի կնոջ անունը Թամթա էր, որով մեզի ծանօթ միակ դուստրը Գրիգոր Բ-ի Թամթա կը կոչուէր⁽⁴⁾:

Ունինք եւ արձանագրութիւն մը Մարգպան Բ-ի ծառայող Սէվճէի որդիին Արզանէն՝ որ «...կամակցութեամբ պատրոնին Գրիգորի եւ Արզան որդի Սէվճէի եւ ամուսին իմ Մամա միարանեցաք սուրբ ուխտիս...» (Յիշատ. 29):

Ս Ա Ր Գ Ի Ս Բ

Մարծպան Բ-ի որդին էր Սարգիս Բ, եղբայրը Ասլան բէկի եւ Գրիգոր Բ-ի, որուն մասին կը յիշէ Կիրակոս Գանձակեցի անգամ մը, բոելով. «... Գրիգոր իշխանն, որդի Մարգպանին, եղբայր Ասլանբէկին, Սարգսի եւ Ամիրսային, յազգէ Մամիկոնէից» (էջ 272):

Ուրիշ ծանօթութիւն չունիմ իր մասին:

(4) Աղօթյաճեան կը սխալի գրելով. «Գրիգոր ունէր հաւանորէն երկրորդ անուն մը՝ Համիկի. վրանդի աչղ թուականներուն կը յիշատակուին նոյն անունով անձեր, մին Համիկի Դեղեցի, որ իր վկայ կը յիշատակուի Բարձրաքաշ վանքին մէկ արձանագրութեան մէջ 1246ին, եւ միւսը՝ Համիկի Մամիկոնեան, որուն կինը Մամբան էր» («Պատմ. Հայաստանի Սահմանները», էջ 273բ): Ճշգրտելով որ երկու Համիկիները նոյն անձն են: Թէ Գրիգորի(Բ) կինը եւ թէ Համիկայ կինը կոչուած են Մամբան: Գրիգոր Բ երբեք չէ կոչուած Համիկի եւ աղբիւր չկայ նոյնացման, բայց իրենց ամուսիններուն նոյն անունը ունեցաւ: